ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 փետրվարի 2020թ. **N 9**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի 12.02.2020թ. թիվ 01-103 գրությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով և նպատակ ունենալով հստակեցնել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի՝ նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի վերաբերյալ տարաբնույթ ընկալումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահը 12.02.2020թ. իր թիվ 01-103 գրությամբ նշում է, որ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է. «Զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող քարոզչության, ինչպես նաև քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի օգտագործման նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության համար սահմանված կանոնները, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ: Քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամերի քանակը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին հանրային

ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը»: Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 24.6-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է հանրաքվեների քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը, ժամերի քանակը և ժամանակացույցը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հեռուստաընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինն է՝ խնդրվում է պարզաբանել, թե որ հեռուստաընկերություններով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը, ժամերի քանակը և ժամանակացույցն է սահմանելու Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է. «Քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամերի քանակը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»: Նշված իրավանորմում կիրառված է «զանգվածային լրատվության միջոցներով» եզրույթը, որն ավելի լայն է, քան «հեռուստաընկերություններ» եզրույթը:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է.

«Քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով քարոզչության համար տրամադրվող վճարովի և անվճար ժամերի քանակը պետք է հավասար լինի: Քարոզչության կողմերն իրավունք ունեն՝

1) անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե,

2) վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե՝ քարոզչության հիմնադրամի միջոցների հաշվին»:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Քարոզչության իրականացման հանրային միջոցներից (հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի անվճար և վճարովի եթերաժամերից, արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքից, համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացված անվճար տեղերից) կարող են օգտվել «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերը …:»:

Նշված իրավադրույթներով, ըստ էության, սահմանվում են իրավակարգավորումներ հանրաքվեի քարոզչության իրականացման հանրային միջոց՝ հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի համար՝ պայմանավորված նրանց իրավական վիճակով: Օրենսդիրը նաև հստակ սահմանել է տրամադրվող անվճար և վճարովի եթերաժամի ընդհանուր տևողությունը:

Վերոհիշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությամբ ակնհայտ է, որ վճարովի և անվճար եթերաժամի տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները, որպես քարոզչության իրականացման հանրային միջոցներից օգտվելու հնարավորություն, վերաբերելի են բացառապես հանրային հեռուստատեսությանը և հանրային ռադիոյին:

Նկատի ունենալով նշված իրավակարգավորումների բովանդակությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի պահանջներով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է.

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ «քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամերի քանակը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» իրավադրույթին համապատասխան ընդունվող որոշումը վերաբերելի է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոյի համար սահմանված վճարովի և անվճար տրամադրվող եթերաժամին: Այլ հեռուստաընկերությունների և ռադիոընկե-րությունների կողմից եթերաժամ տրամադրելու պայմանները (գին, տևողություն և այլն) սահմանվում են նրանց կողմից՝ պահպանելով Ընտրական օրենսգրքով և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված պահանջները և սկզբունքները՝ ապահովել ոչ խտրական և միատեսակ պայմաններ քարոզչության կողմերի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**